Աշտարակ
Կաթ

Ashtarak-Kat CJSC
Դրոյի 13 փող., Երևան 0069, ՀՀ
Dro 13, Yerevan 0069, RA
հեռ/tel: (37410) 230406, ֆաքս/fax: (37410)245430
e-mail: info@ashtarakkat.com
www.ashtarakkat.com

N 470/2014
03.02.14թ

„ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ՛, ՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆ
ՊՐ-Ն ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 24.01.2014թ-ի թիվ 212-ի 3 գրության, որը „ Աշտարակ-Կաթ„ ՓԲԸ-ն է մուտք եղել 27.01.2014թ-ին հայտնում եմ

ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն, հանրապետությունում արտադրված կովի կաթի արտադրության ծավալները կազմել է 2012թ. 618,2 հզ. տ., 2013թ.՝ 657 հզ. տ. կաթ, որի մեջ ապրանքային կաթը (վերամշակվում և վաճառվող) կազմել է 52%-ը, համապատասխամաբար՝ 319,8 մլն. լ. և 339,5 մլն. լ.: Հայտնի է, որ Հայաստանին բնորոշ է կաթի արտադրության խիստ սեզոնայնությունը, ու տարվա ապրլ-օգոստոս 5 ամիսների ընթացքում արտադրվում է հանրապետությունում արտադրվող կաթի 70%-ը: Առավելագույն և նվազագույն ամսեկան արտադրված կաթի ծավալների տարբերությունը կարող է տատանվել 7-9 անգամ, որը ավելի մեծ ցուցանիշ է քան Ռուսաստանում: Համեմատության համար նշենք, որ արևմտյան երկրներում այդ ցուցանիշը կազմում է 1, երբ կայուն, նույն քանակությամբ կաթ է արտադրվում տարվա բոլոր ամիսներին:

Չոր կաթը կամ կաթի փոշին կովի կաթն է՝ ջրազրկված վիճակում: Այն ոչ մի երկրի օրենսդրությամբ արտադրության ընթացքում չի արգելվում օգտագործել և օրինաչափ է չոր կաթից պատրաստված սննդամթերքի վաճառքը շուկայում: Բազմաթիվ եվրոպական երկրներում, ինչպիսին, օրինակ՝ Իռլանդիան է, որտեղ կաթի արտադրությունը մեր երկրի նման, կրում է սեզոնային բնույթ, օրենսդրությամբ չոր կաթը նույնիսկ չի ազելվում օգտագործել պանրի արտադրության գործընթացում, ինչը պանրի արտադրությամբ զբաղվող ընկերությունների կողմից Հայաստանում հիմնականում չի արվում: Պանրի արտադրությամբ զբաղվող վերամշակողները մեր երկրում գերադասում են պանրի պատրաստումը անարատ կովի կաթից:

Միջազգային պրակտիկայում չոր կաթի բաղադրության մեջ տոկոսի մակնշման պահանջ չի դրվում: Այդ մասին են վկայում ԵՄ համապատասխան դիրեկտիվները և կաթի մակնշման միջազգային ստանդարտները (օրինակ՝ Փաթեթավորված սննդամթերքի պիտակավորման ընդհանուր ստանդարտ CODEX STAN 1-1985): Սննդամթերքի միջազգային ստանդարտներով մակնշման պահանջում արտադրանքի անվանման մեջ պահանջվում է նշել սննդամթերքի իրական բաղադրությունը և ֆիզիկական վիճակը, կամ ինչ ձևով է այն պատրաստվել, օրինակ՝ չորացրած, կոնցենտրացված, վերականգնված, ծխեցված և այլն (CODEX STAN 206-1999):

Նման պահանջ չկա նաև մեր օրենսդրության մշակման համար հիմք հանդիսացող Ռուսաստանի 2008 թվականի կեսերին ընդունված "Կաթի և կաթնամթերքի տեխնիկական կանոնակարգ" օրենքի 36 հոդվածի 13 կետում, որտեղ կաթնամթերքի մակնշման պահանջներում չոր կաթի օգտագործման պարագայում, բացառությամբ երբ այդ կաթնամթերքի մեջ չոր կաթն օգտագործվում է նորմալանացման նպատակով,

բաղադրության մեջ պահանջվում է նշել միան "Պատրաստված է չոր կաթի (շիճուկի, սերուցքի) օգտագործմամբ" ձևակերպումը:

Բացի այդ, կաթի արտադրության սեզոնայնության հետ կապված արտադրանքի բաղադրությունում անընդհատ փոփոխվող չոր կաթի օգտագործման տոկոսային պարունակությունը Հայաստանի կաթ վերամշակողներից պահանջում է մանկնշվածքի համապատասխան փոփոխություններ, իսկ փաթեթավորող նյութերը և տարաները հիմնականում ներկրվում են արտասահմանից՝ մեծ քանակներով, բաղադրության վերաբերյալ արդեն իսկ մակնշված տեսքով: Կաթնամթերքի արտադրանքի մեջ միայն չոր կաթի առկայության դեպքում դրա առկայության մակնշման մեջ ներկայացումը ավելի կբարդացնի և կվնասի տեղական արտադրության կաթ վերամշակող կազմակերպությունների գործունեությունը:

Ձեր կողմից առաջ քաշված այն հարցին, թե ,,Աշտարակ-կաթ,, ՓԲԸ-ի արտադրած կաթում և կաթնամթերքում ըստ ապրանքատեսակների, քանի տոկոս են կազմում ,,անարատ կաթի,, , ,,անարատ չոր կաթի,, , ,,չոր յուղազերծ կաթի,, , ,,կաթնային չոր շիճուկի,, , ,,անարատ չոր սերուցքի,, զանգվածային մասերը,, չենք կարող տալ սպառիչ պատասխան հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերությունում կաթնամթերքի մեջ չոր կաթն օգտագործվում է նորմալանացման նպատակով և չափաբաժինների համամասնությունը որոշվում է բացառապես սեզոնայնության և կաթի ֆիզիկաքիմիական ցուցանիշներից ելնելով, յուրաքանչյուր խմբաքանակի համար առանձնացված :

Ընկերությունում կաթի մթերումը կատարվում է յուրաքանչյուր օր և ՀՀ ամբողջ տարածքից, իսկ կաթի ֆիզիկաքիմիական ցուցանիշները յուրաքանչյուր տարածաշրջանի համար էականորեն տարբերվում են միմյանցից:

Առավել սպառիչ պատասխան տրամադրելու նպատակով առաջարկում եմ Ձեզ այցելել ընկերություն, ծանոթանալ արտադրական ավտոմատացված պրոցեսներին, իսկ լրացուցիչ հարցադրումներ առաջանալու դեպքում պատրաստ ենք տրամադրել լրացուցիչ պարզաբանումներ:

Հարգանքներով

,,Աշտարակ-Կաթ,, ՓԲԸ-ի իրավաբան Արմեն Ումրշատյան